ձեր առ ամենայն իրաւունս և արդարութիւն։

Եւ որպէս ոչ ոք ի բնութենէ մարդոյ կարէ խաբել զԱստուած, և ոչ սուրբս նորայ, այսպէս ես ոչ յիշխեմ խոստանալ ինչ և խնդրել 'ի տեառնէ տրիտուր վասն ապա գործելոյ մեզ բարիս բայց ի ձկտմանէ մտաց բանական հոգւոյ ասեմ, զի մեզ այս աննշմարելի փոփոխական բնութեանս հարկաւոր է որոգայթ մի անբեկանելի կազմեալ իրաւամբ և արդարութեամբ, զի կալով մնասցէ ընդ մէջ մեր պատրաստ վասն կալանաւոր առնելոյ նոցայ որ ի որ ոք պատճառէ որ իցէ, եթէ կամիցին ուխտազանց լինելով գործել զչարիս իսկոյն ըմբռնեսցի անձն ամենայն ըզդայարանօք նորա պահելով անշարժ, զի ձեռ չարագործին մի գոցի Շարժում գործելոյ չարութիւն մինչև հատուցանելով վարձ գործոց չարութեան իւրոյ և բժշկեսցի 'ի տկարութենէ չարեաց իւրոց, և ապա գոցի արձակումն, և կալանաւորութիւնս լինիցի դարման նշաւակութեան ապագայ տկարացելոց մերոց, վասն որոյ հաւատալով ի այս բնական պատճառ որ կարէ պահել մեզ հաստատուն ի վերայ որ ոք բարեպէս ուխտադրութեանց մերոց, ուրեմն տայ տեղի զիս զի յոյս առ Արարիչն իմ պահելով խոստանամք զի կալով մնասցուք հաստատուն ի վերայ Օրինաց արդարութեան մերոյ, և ի վերայ յայսմ հաւատոյս, աղաչեմ զձեզ ամենայն սուրբք յԱստուծոյ մի երկմտիք 'ի վերայ Օրինօք և արդարութեամբ վարելոյ զկեանս մեր, այլ անխտրանօք բարեխօս լերուք առ Տէր Աստուածն մեր զի ներեսցէ մեզս